

ԳՐԱՐԱՐԻ ԼԱՏԻՆԱՏԻՊ ՆՈՐԱՄՈԺՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ XVIIII ԴԱՐՈՒՄ

ՎԱԶԳԵՆ ՀԱՄԱՐԶՈՒՄՅԱՆ

Գրաբարի լատինատիպ նորամուծությունները, որոնք արհեստականորեն հայերեն են ներթափանցում XIV դ. սկսած, հաղթահարվում են XVIII դ. սկզբներից մինչև 80-ական թվականներն ընկած ժամանակաշրջանում: Ինչպես նախկինում, այնպես էլ XVIII դ. լատինաբանությունը հանդես է գալիս հիմնականում գրաբար հայերենով շարադրվող, մեծ մասամբ թարգմանական և երբեմն ինքնուրույն բնույթի կրոնադավանաբանական, աստվածաբանական-իմաստասիրական երկերում ու ձևակերպվում քերականագիտական աշխատություններում:

Հայ բանասիրության և քերականագիտության մեջ լատինաբանությունը, անկախ որոշ դեպքերում նկատվող դրվատական կամ պարսավական գնահատություններից, ուսումնասիրված է բավական հանգամանալից և արժեքավորված՝ ըստ ամենայնի՝ Սակայն գրաբարի լատինատիպ նորամուծությունների հաղթահարումը լեզվական նյութի քննությամբ մինչև այժմ չի արժանացել որևէ ուշադրության:

Այստեղ մեր նպատակն է բացահայտել գրաբարի լատինատիպ նորամուծությունների հաղթահարումը լեզվական նյութի ընձեռած հնարավորություններից ելնող չափանիշներով: Դրա համար ընտրել ենք լեզվական տարբերվիճակներ ներկայացնող շուրջ մեկ տասնյակ գրավոր աղբյուրներ, որոնք հիմնականում թարգմանական երկեր են, շարադրված են լատինատիպ գրաբար հայերենով և հանդես են գալիս կամ XIV դ. սկսած, կամ XVIII դ.: Նախկինում հայտնի թարգմանական երկերն օգտագործվում են այնքանով, որքանով գրանք, անկախ մինչև XVIII դ. ունեցած գրչագրությունից և տպագրությունից, թարգմանվում են նորովի, վերահրատարակվում ռաբազրված կամ իմբրագրված՝ վիճակով: Այս կարգի թարգմանական երկերի լեզվական նյութի համեմատական քննությունը ավելի ակնառու է դարձնում ոչ միայն գրաբարի լատինատիպ ձևերի կիրառությունների բնույթն ու չափերը, այլև այդ նույն ձևերի հաղթահարման ուղղությամբ ծավալված աշխատանքը: Ընդ որում, միևնույն երկի ձեռագրի և տպագրի, հին և նոր թարգմանությունների, ինչպես նաև հայտնի և նոր տպագրությունների լեզվական համեմատությունը տալիս ենք ոչ ամբողջովին, այլ որոշակի, առավել բնութագրական գլուխների և հատվածների ընտրությամբ:

Լատինաբանությունը մեզանում հաղթահարվել է մշակութային համընդհանուր դիմադրության պայմաններում, լեզվաշինարարական երկարատև ու աստիճանական պայքարի ուղիով: Այս իմաստով աչքի է ընկնում հատկա-

1 Տճ՝ Գ. Զարբհանալյան, Պատմություն հայերեն դպրության, Բ մաս, Վենետիկ, 1878, էջ 45—55, 194—212, 2. Ահառյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Երևան, 1951, էջ 307—323, Յովհաննէս Փոսեցի, Յաղագս քերականին (Ներածությունը Լ. Խաչիկյանի և Ս. Ավագյանի), Երևան, 1977, Գ. Զահնուկյան, Գրաբարի քերականության պատմություն, Երևան, 1974, Վ. Մառուկյան, Գրաբարի կառուցվածքի ուսումնասիրությունը XVII դարի քերականների աշխատություններում, Երևան, 1969 (Թեկն. դիս., ձեռագիր), Լ. Հովհաննիսյան, Գրաբարի երկու դրսևորում XVII դարում (սեռագր. մատենագրական հանդես, Երևան, 1980, № 4, էջ 172—183) և այլն:

պես Մխիթարյանների գործունեությունը, որը նկատվում է, նախ, Մխիթար Սեբաստացու կողմից՝ նախորդ դարերում հայտնի ձեռագիր կամ տպագիր երկերի սրբագրման, խմբագրման և հրատարակման ընթացքում լատինատիպ ձևերը փոքրիշատե կրճատելու, երկրորդ՝ Վրթանես Ասկերյանի կողմից նորովի թարգմանվող երկերը լատինաբանությունից զերծ պահելու, լատինատիպ արհեստականության դիմաց գրաբարի բնականությանը ձգտելու, երրորդ՝ Մխիթարի աշակերտների կողմից նախկինում տպագրված երկերը վերահրատարակելիս լատինաբանության թուլացումն իր պվարտին հասցնելու, այլև իսպառ վերացնելու ուղղությունը տարվող աշխատանքներում:

Այսպես, դեռևս 1715 թ., վենետիկում տպագրված Ալբերտ Մեծի «Համառոտություն աստուածաբանութեան» թարգմանական երկի «Բան առ ընթերցողս» առաջաբանում Մխիթար Սեբաստացին հետևյալ դիտողությունն է անում. «Բայց զի մի քամահօղք բեղմնաւորաց աշխատութեանց թարգմանչաց սորին գտանիցիմք, զանցս արարաք զայնոքիւք ոմամք, որք ոչ ըստ նորոյ քերականութեանց են եղեալք, ի վերացմունս բայից և կամ ի յայլս, զի այնոքիւք զօրութիւն բանից ոչ վնասին, այլ մանաւանդ քաղցրաբանութիւնք պատճառին, առ յոր վախճան նախնիք մերք ևս թոյլ ետուն, և փոխանակ դնելոյ արձեցեալ, գոյնաւորեցեալ, լնանեցեալ և այլք նմանք, եղին՝ արձեալ, գոյնաւորեալ, լցեալ: Եւ փոխանակ դնելոյ սրբոյ գրոց, բարեաց արեանց, եղին՝ սուրբ գրոց, բարի արեանց և այլք նմանք: Վասն որոյ աղաչեմք զընթերցողս վարդապետսն, զի զնուաստութիւն մեր, որ քան առ յայնս անբասիրս արասցեն, զի ոչ թէ ոչ ճանաչելոյ զայնպիսիսն զանց արարաք, այլ զի մի ամբարտաւանք գտանիցիմք զվաստակս նախնեաց խախտելով, քան զոր շիք յանդգնագոյն, թոյլ թողաք մնալ և մանաւանդ մինչև գոյացութեան բանին զոչ իմն վնաս առ բերէին»² (ընդգծումները մերն են—Վ. Հ.): Այս դիտողությունը լատինաբանության արտաքին՝ հոգևոր-մշակութային անհարկի ազդեցությունը թոթափելու, և ներքին՝ լեզվական համապատասխան նորամուծություններից ձերբազատվելու ուղղությամբ ծավալվող աշխատանքների առումով որքան հետաքրքրական, նույնքան և հիմնարար նշանակություն պիտի ունեցած լինի:

Գրաբարի լատինատիպ նորամուծությունների հաղթահարումը համեմատական-լեզվական քննությամբ բացահայտելու դեպքում նկատի ենք ունեցել հիմնականում հետևյալ երկերը: Թովմա Գեմբացու «Յաղագս նմանող լինելոյ...» գիրքը թարգմանել է նախ Հովհաննես Կոստանդնուպոլսեցին, այնուհետև՝ Վրթանես Ասկերյանը: Այդ թարգմանություններն ունեն մի շարք տպագրություններ³: Հովհաննես Կոստանդնուպոլսեցու թարգմանության V տպագրությունը, որն այս դեպքում առանձին ուղադրություն է գրավում, իրականացվել է Մխիթար Սեբաստացու ջանքերով⁴: Մենք լեզվական համեմատության եղբեր ենք ընտրել երկու տարբեր թարգմանությունների առաջին տպագրությունները, ինչպես նաև Մխիթար Սեբաստացու վերահրատարակությունը: Թարգմանությունների առաջին տպագրությունները նախապես համեմատել ենք երկրորդ տպագրությունների հետ: Հիշյալ թարգմանությունների, Մխիթարի հրատարակության որոշակի գլուխների և հատվածների համեմատ-

² «Համառոտութիւն աստուածաբանութեան երանելոյն Մեծին Ալպերտի», Վենետիկ, 1715, էջ 3 (այսուհետև՝ ԱՄՀԱ),

³ «Դիք Թովմայի Գեմբացույ Յաղագս համահետեմանն Քրիստոսի», Հոռմ, 1674 (II տպ., Ամստերդամ, 1696, III տպ., Կ. Պոլիս, 1700, IV տպ., Հոռմ, 1705, V տպ., Վենետիկ, 1737, այսուհետև՝ ԹԳՀ), «Թովմայի Գեմբացույ Յաղագս նմանող լինելոյ Քրիստոսի», Վենետիկ, 1786 (II տպ., Վենետիկ, 1853, այսուհետև՝ ԹԳՅ),

⁴ Այդ տպագրությունն այսուհետև բերվում է «Մխիթար Սեբաստացու տպագրություն» (ՄՍ) պայմանական անվանումով:

տությունը ի հայտ է բերում լեզվական տվյալ խնդրի պարզաբանմանը նպաստող արժեքավոր փաստեր և իրողություններ:

Պետրոս Արագոնացու «Գիրք առաքինութեանց» և «Գիրք մոլութեանց» աշխատությունները թարգմանվել են Հակոբ Քոնեցյու կողմից 1339 թ.⁵ Աստվածաբանական-իմաստասիրական այդ երկերը նախ տպագրվում են Մխիթար Սեբաստացու անմիջական նախաձեռնությամբ⁶, այնուհետև՝ նրա աշակերտների վերահրատարակությամբ⁷: Սեբաստացին իր հրատարակած գրքերին կցել է «Բան առ ընթերցողս» առաջաբանը, իսկ վերջում տվել՝ «Ուսանաւոր առ գովութիւն մատենիս»: «Գիրք առաքինութեանցի» առաջաբանում կան լատինատիպ կազմություններ, որոնք երկրորդ տպագրության ընթացքում նրա աշակերտների ձեռքով սրբագրված են, փոխարինված համեմատաբար լատինական ձևերով: Դրանք այստեղ նույնպես նկատի են առնված: Այդ երկերի կրկնակի տպագրությունների լեզվական նյութի համեմատությամբ, անշուշտ, ի հայտ են գալիս կարևոր տվյալներ, որոնք խոսում են լատինատիպ ձևերի աստիճանական նվազեցման և գրաբարից դուրս մղելու երևույթի մասին:

Հովհաննես Պոնափի «Ձեռքածութիւն յերկինս» և «Սկզբունք և ուսուցմունք կենի քրիստոնեականի» գրքերը թարգմանված են ժամանակի գրաբար հայերենով⁸, լատինատիպ ձևերին համեմատաբար մեծ տեղ է տրվում առաջին գրքի թարգմանության մեջ: Երկրորդ գրքի տպագրությունը իրականացվում է Մխիթար Սեբաստացու «Հրամանով և սրբագրությամբ»: Այս երկու տպագրությունների լեզվական նյութի քննությունը տալիս ենք Սկզբունք և ուսուցմունքի վերջում (էջ 335—347)՝ «Ձեռքածութիւն յերկինսից» առնված մի հատվածի համեմատության սահմաններում⁹: Առանձին թարգմանություններում հանդիպող սույն հատվածի կոնկրետ համեմատությունից նախ՝ պարզվում են լեզվական-սրբագրական աշխատանքի հետաքրքրական կողմեր, որոնք, անշուշտ, լատինաբանության թուլացման ուղղությամբ Մխիթար Սեբաստացու ծավալած աշխատանքի վկայությունն են, երկրորդ՝ երևան են գալիս գրաբարին ընդհանուր առմամբ խորթ, լատիներենի կառուցվածքով պայմանավորված շարահյուսական ակնհայտ տարբերություններ, երրորդ՝ վերջիններս ավելի բնորոշ են «Ձեռքածութիւն յերկինս» երկի առաջին թարգմանությանը և մեղմացվում են երկրորդ թարգմանության մեջ:

Ալեքսեր Մեծի վերն արդեն հիշատակված երկը հայտնի է վաղնշական թարգմանությամբ: Այն առաջին անգամ տպագրվում է Մխիթար Սեբաստացու նախաձեռնությամբ: Երկի լեզվական քննության ժամանակ համեմատել ենք տպագիր և ձեռագիր օրինակների կոնկրետ հատվածներ¹⁰:

Աղեքսանդրոս կրոնավոր անունով հեղինակի «Յարացոյց ապաշխարողաց» երկը 1719 թվականին թարգմանել է Պետրոս Թիֆլիսեցին, տպագրվել է

5 Հմմտ. Յովհաննէս Քոնեցի, Յաղագս քերականի, էջ 31—33:

6 «Գիրք առաքինութեանց», անդրածեալ ի լաթինականէն ի հայ բարբառս, Վենետիկ, 1731 (այսուհետև՝ ԳԱ, I), «Գիրք մոլութեանց, անդրածեալ ի լաթինականէն ի հայ բարբառս, Վենետիկ, 1720 (այսուհետև՝ ԳՄ, I):

7 «Գիրք առաքինութեանց», Վենետիկ, 1772 (այսուհետև՝ ԳԱ, II), «Գիրք մոլութեանց», Վենետիկ, 1773 (այսուհետև՝ ԳՄ, II):

8 Յովհաննէս Պոնա, Ձեռքածութիւն յերկինս, Հոռոմ, 1671 (այսուհետև՝ ՅՊՁՅ), Յովհաննէս Պոնա, Սկզբունք և ուսուցմունք կենի քրիստոնէականի, Վենետիկ, 1744 (այսուհետև՝ ՅՊՍՈՒ):

9 Այդ կրկնվող հատվածի մասին գրքում տրվում է հետևյալ ծանուցումը. «Վճիռք և բանք գործունեայք նոյնոյ հեղինակի Յովհաննու Պոնային, համաժողովեցեալք ի միառոյ գրքոյ նորին կողեցելոյ Ձեռքածութիւն յերկինս, որ 73 ամաց յառաջ թարգմանեցեալ եղև ի մերս բարբառ և տպագրեցեալ» (էջ 335):

10 Հմմտ. Մաշտոցի անվան մատենադարանի № 9068 (1344 թ., Քոնափի վանք, գրիչ՝ Ֆրա Դոմինիկոս Սալիթադեցի) ձեռագիրը:

1731 թ., վենետիկում, տպագրությունը՝ Մխիթար Սեբաստացու «հրամանագրություն և սրբագրություն»¹¹:

Եվ, վերջապես, լատինաբանության հաղթահարման լեզվական քննությունը արժեքավոր տվյալներ են մատուցում Դոմինիկոս Բոհուրսյանի «նովմունք քրիստոնեականք» գրքի կրկնակի թարգմանությունները: Գրքի առաջին թարգմանության հեղինակն է Հովհաննես Կոստանդնուպոլսեցին, իսկ երկրորդին՝ Վրթանես Ասկերյանը¹²: Առաջին թարգմանությունը գիշում է երկրորդին ոչ միայն գրաբարի կանոնական ձևերի կիրառությամբ հետամուտ լինելու, այլև թարգմանության ընդհանուր ճաշակի տեսակետից: Վրթանես Ասկերյանն իր թարգմանության տպագրության առաջաբանում այդ առիթով նշում է հետևյալը. «Քանզի չգիտեմք որպէս առաջին թարգմանին զբաղում բանս այսր մատենի փոփոխեալ էր. և զտրոյր բանն ոչ եթէ թարգմանեալ. ալ իբր նորոգ շարադրեալ: Բուռ հարաք նորոգ թարգմանել, զգուշանալով ի պակասութեանց սպրդելոյ յառաջին նուագին, որպէս կարեն քաջ տեսանել, որք զսա և զնա համարադրատ ընթեռնուցուն, գտեալ զսա միանգամայն ի բազում տեղիս ոչ միայն տարբերիլ, այլև ետեիլ իբր ալ լրոյց»՝ դայնմէ նիւթոյ ճառարան: Եւ սակայն համեմատելով զսա ընդ իտալականին տեսցեն, թէ որպէ՞ս ընդ նմա համաբան լծորդի»¹³:

Այսպիսով, հիմնականում վերոհիշյալ գրավոր աղբյուրների լեզվական նյութի հիման վրա հնարավորություն է ստեղծվում բացահայտելու լատինատիպ նորամուծությունները նոր շրջանի գրաբարի բառապաշարի և քերականական կառուցվածքի հարաբերությամբ: Այդ նորամուծությունների հաղթահարումը, արտաքին հանգամանքներից բացի, պայմանավորված էր ոչ միայն մեռած լատիներենի առանձնահատկություններից բխող անպատեհությամբ, այլև գրադասման բնական ու կենդանի ընթացքով ձևավորվող գրական աշխարհագրարի կողքին ավանդաբար գործառուղ գրաբարի՝ արհեստական, սահմանափակ հաղորդակցման միջոց լինելու հանգամանքներով:

Այժմ անցնենք լատինատիպ նորամուծությունների հաղթահարման ձևերին ու եղանակներին առանձին-առանձին:

1. Լատինատիպ նորամուծություններն ամենից առաջ գրաբարի բառապաշարին խորթ և արհեստական կազմություններ են. դրանք նկատվում են հատկապես ածանցման և բառաբարդման դեպքում: Բառերի ածանցման ժամանակ, ինչպես ձևակերպվում է նաև լատինատիպ քերականություններում, լատինաբան հեղինակները հիմնականում օգտվում են հունաբան հայերենի նախածանցներից, որոնց կիրառությունը հասնում է մեծ չափերի և ընդունում տարբեր եղանակներ: Այստեղ արտասովորն այն է, որ ածանցումը տեղի է ունենում նախածանցների և վերջածանցների բռնադրոսիկ զուգորդումով, բառի կազմում մեկ և ավելի ածանցների՝ մեծ մասամբ անհարկի ներմուծումով, նախածանցների նախդրային կիրառությամբ և այլն:

Ըստ այդմ, արհեստականորեն ներմուծված ածանցները հաղթահարվում են հետևյալ կերպ. ա) անհարկի կիրառությամբ՝ ածանցների վերացում. հմմտ. յաղագս մեծի քաղցրութեան համախոկմանն (ԹԳՅԶ, 63)—առ մեծի քաղցրութեան խոկման (ԹԳՅՆ, 39). ներհեղուս ի նոսա (ԹԳՅԶ, 528)—հեղուս ի նոսա (ԹԳՅՆ, 299). ենթասուզեսցի (ԹԳՅԶ, 235)—սուզեսցի (ԹԳՅՆ, 142). առբերելոց ի հեղինակէ գրոյն (ԳՄ, I, էջ II)—բերելոց ի հեղինակէ գրոյն (ԳՄ, II, 14). ոչ ինչ մակ յաւելի կամ պակասիլ կարէ (ձեռ. № 9068, 14բ)—

11 Աղէքսանդրոս Կրօնաւոր, Յարացոյց ապաշխարողաց, Վենետիկ, 1731 (այսուհետեւ՝ ԱԿՅԱ). սույն տպագրությունը օգտագործում ենք Մաշտոցի անվան մատենադարանում պահվող № 6922 (ԺԸ գ.) եղակի ձեռագրի հետ անցկացվող համեմատությամբ:

12 Դոմինիկոս Բոհուրսյան, Խոկումն քրիստոնեական, Վենետիկ, 1687 (I տպ.), Վենետիկ, 1719 (II տպ.), Վենետիկ, 1732 (III տպ.), (այսուհետեւ՝ ԽԲ, I), Դոմինիկոս Բոհուրսյան, Խոկմունք քրիստոնեականք, Վենետիկ, 1771 (այսուհետեւ՝ ԽԲ, II):

13 ԽԲ, II, էջ 3—4:

ոչինչ յաւելով կամ պակասիլ կարէ (ԱՄՀԱ, 46). վերամեամ (ԳԱ, I, էջ III)—մեամ (ԳԱ, II, էջ III) և այլն:

ր) Ածանցավոր բառի դիմաց մեկ այլ պարզ բառի օգտագործում. հմմտ. ստորանկեալ միշտ այլոց կարելու լաւագունեղի (ԳԱ, I, էջ II)—գտանի միշտ այլ կարելի լաւագոյն (ԳԱ, II, էջ II). վասն որոյ եմք նախասանմանեցեալ (հՔ, I, 15)—ոյր վասն եղեալն եմք (հՔ, II, 21). այլ այն յորում արդինատրապէս կենցաղավարիմք (հՔ, I, 118—119)—այլ այն, յոր առաւել դանձեցեր արդինս (հՔ, II, 70). ոչ միայն վասն շնորհացն վերընդունեցելոյ (հՔ, I, 111)—ոչ միայն վասն շնորհացն, զոր ընկալաւ (հՔ, II, 74) և այլն:

գ) Ածանցավոր բառի փոխարին գրաբարին հարազատ ձևի կիրառում. հմմտ. յաղօթելոյ մտաւորապէս ոչ դադարէին (ԹԳՅԶ, 39)—ի մտաւոր աղօթից ոչ դադարէին (ԹԳՅՆ, 39). ստորանկիմ (ԹԳՅԶ, 235)—ի ստոր բերիմ (ԹԳՅՆ, 142). նորով յարաւանիմ խնդութեամբ (ԹԳՅԶ, 235)—նոր խնդութիւն զգնեամ (ԹԳՅՆ, 142). նաճատակք արեամբք իւրեանց վերաստացեալք են, զոր այնքան հրաշք և սքանչելիք համաճատատեալք են (հՔ, I, 5—6)—այնչափ վկայից արեամբ ստորագրեալ, բազում սքանչելեօք հաստատեալ (հՔ, II, 15). տին այն ոչ է տիւ պաշտօնակապէս ծախեցեալ, յորում շանանտապէս յառաջանամք ի յիրակութիւնս կենցաղականս (հՔ, I, 118—119)—օր բարեբաստիկ ոչ է այն, յոր առաւել յաշողեցան կենցաղական իրակութիւնք քո (հՔ, II, 70) և այլն:

Լատինատիպ գրաբարով շարադրված երկերում զգալի տեղ է հատկացվում անսովոր և անհարկի կազմութիւն ունեցող բարդ բառերին: Դրանք թեև հնարավոր է, որ որոշ չափով օգտագործված լինեն դեռևս հին հայերենի շրջանում, ամբողջովին ի հայտ են գալիս արհեստական կիրառութիւններով: Այդ արհեստականութիւնը պայմանավորված է լատիներենի բառակազմական համատիպ օրինաչափութիւնների բացարձակ հետևութեամբ: Լատինատիպ կազմութեամբ բարդ բառերը հետագայում փոխարինվում են գրաբարի բառակազմութեանը ներդաշնակ բարդութիւններով, տվյալ բարդութեանը պատշաճող բաղադրիչների զուգակցումով, կամ էլ՝ սովորական պարզ բառերով:

Այս դեպքում լեզվական արհեստականութիւնը հաղթահարվում է հետևյալ կերպ. ա) բարդ բառի փոխարինում սովորական բարդութեամբ հանդես եկող բառով կամ հարադրութեամբ. հմմտ. եւ զի զարմանք են, թէ որպէս փութանակի բարձրամտիցիմ (ԹԳՅԶ, 235)—եւ զարմանք այն մեծ են, զի այսպէս յանկարծ վերբերիմ (ԹԳՅՆ, 142). որում ոչ կարիմ ընդդիմաբանել (ԹԳՅԶ, 234)—և շունիմ տալ պատասխանի (ԹԳՅՆ, 142). ահա դու ընդդիմաւարտիս ընդ իս (ԹԳՅԶ, 234)—ահա ընդդէմ դառնաս դու ինձ (ԹԳՅՆ, 141—142). զբարեկամս իւր ի նրեռակցութիւն ինքեան (ԳԱ, I, էջ II)—զբարեկամս իւր ի խնդակցութիւն ինքեան (ԳԱ, II, էջ II), ինչպես նաև (նույն էջերում)՝ նրեռակից—խնդակից բառերը և այլն:

բ) Բարդ բառի փոխարինում պարզ բառով կամ սովորական բառակապակցութեամբ. հմմտ. և այնպիսիք նեղատախին, և յարածամ տրտնջին (ԹԳՅԶ, 29)—եւ այսպիսիք տանջին և ընդ դոյզն իրաց տրտնջին (ԹԳՅՆ, 20). նկատեա յօրինակս կենդանաբաւս սրբոց հարց (ԹԳՅԶ, 61)—հայեաց ի կենդանի օրինակս սրբոց հարց (ԹԳՅՆ, 38), այլև նկատեա ի կենդանի օրինակս սրբոց հարց (ՄՍՍ, 47). իսկ եթէ ակնարկիցես առ իս (ԹԳՅԶ, 235)—ապա թէ յիս ճայիս (ԹԳՅՆ, 142). քանզի որպէս և կարգադրիցեմ գխադադութիւն իմ (ԹԳՅԶ, 250)—զի որպէս և յարգաբեցից զիմ խաղաղութիւն (ԹԳՅՆ, 150). զոր այժմ ջերմեռանդապէս բաղձամ վերընդունիլ (ԹԳՅԶ, 568)—զոր արդ եռանդեամբ ընդունել ցանկամ (ԹԳՅՆ, 336). կենցաղատարի (հՔ, I, 9)—կեալ (հՔ, II, 17). իհարկէ պարտ է մեզ կենցաղավարիլ կամ ի ներքոյ հրամանաց բարեգործութեան նորա, և կամ ի ներքոյ հրամանաց արդարութեան (հՔ, I, 11—12)—հարկ է թէ իցեմք ի ներքոյ հրամանաց բարութեան նորա, կամ արդարութեան նորա (հՔ, II, 20) և այլն:

2. Գրառարի ձևարանական համակարգը նույնպես կրում է լատինաբանության ազդեցությունը: Վերջինս ի հայտ է գալիս հատկապես անվանական և բայական միավորների կազմություններում: Անվանական կազմություններում նկատվող լատինատիպ նորամուծություններն արտալիզվական միջամտությամբ պայմանավորված խախտումներ են հին գրական հայերենի գոյականական, ածականական և դերանվանական միավորների ավանդական օրինաչափություններին համեմատությամբ:

ա) Գոյականական ձևերի մեջ երևան եկող նորամուծությունները մասնակի փոփոխություններ են մտցնում գրաբարի թվի քերականական կարգի, հոլովման որոշ տիպերի, առանձին հոլովումների օրինաչափական կազմություններում:

Լատինատիպ նորամուծությունների հաղթահարումն այստեղ ևս ընթանում է այդ մասնակի փոփոխությունների վերացման՝ դասական գրաբարին համապատասխան իրակությունների վերականգնման ու գործադրման ճանապարհով:

Գոյական անունների թվի կազմության մեջ նկատվող անհարմարությունները վերանայվում են: Անեզալիսն և անհոգնական գոյականների (լատիներենի ազդեցությամբ պայմանավորված) անկանոնությունը հարմարեցվում է գրաբարի ավանդական կանոններին: Անեզական բառերի Բ-ն վերականգնվում է, իսկ հոգնակիի ձևով կիրառվող անհոգնականները, ընդհակառակը, հանգես են գալիս իրենց նախկին ձևով: Հմմտ. դի ջանայցէր բառնալ գլեանն նորա (ձեռ. № 6922, 28)—զի ջանայցէր բառնալ գլեանն նորա (ԱԳՅԱ, 28). ոչ կարէ գոլ թարց փորձութեան և ցաւոց կեանն իմ (ԹԳՅԶ, 250)—անհնար է կենաց իմոց լինել անվիրտ և անպատեհաղմ (ԹԳՅՆ, 150). լինէին մարդիք այլոց քաղաքի քաղաքակիցք (ԳԱ, I, 21)—լինէին մարդիկ այլոց քաղաքի քաղաքակիցք (ԳԱ, II, 23) և այլն:

Գոյականների հոլովման ժամանակ, լատիներենի հետևությամբ, ներդրական հոլովում հանդես եկող ըն (ն) նախամասնիկը վերանում է: Վերջինս կամ դուրս է գցվում ընդհանրապես, կամ էլ՝ փոխարինվում դրաբարի սովորական ի նախդրով: Հմմտ. ծառայեցին տեառն ըն սովում և ըն ծաբաւում, ըն ցւտութեան և ըն մերկութեան, ի յաշխատասն և ի վաստակս, ըն տֆնութեան և ըն ծոմում (ԹԳՅԶ, 61)—ծառայեցին տեառն ի քաղց և ի ծաբաւ, ի ցուրտ և ի մերկութեան, ի վաստակս և յաշխատութիւնս, ի խոկմունս¹⁴ և ի պանս (ԹԳՅՆ, 38). ըն նշմարում խոնարհութեան կային, ընգտում հնազանդութեան ապրէին, ըն սիրոյ և ըն համբերութեան շրջէին (ԹԳՅԶ, 64)—ի նշմարիտ խոնարհութեան կային, միամիտ հնազանդութեամբ վարէին, սիրով և համբերութեամբ գնային (ԹԳՅՆ, 40). եթէ ըն հնում օրինում դորքան բարիս առնէր հայրն երկնաւոր (ձեռ. № 6922, 56)—եթէ ի հնում օրինի հայրն երկնաւոր (ԱԳՅԱ, 53). ըն յսկզբան աշխարհիս պատժեաց զհրեշտակս (ձեռ. № 6922, 91)—ի սկզբան աշխարհիս պատժեաց զհրեշտակս (ԱԳՅԱ, 84). քանզի եթէ նիւում իմիք խնդիրցես (ԹԳՅԶ, 238)—զի եթէ զանձն յիմիք խնդրես (ԹԳՅՆ, 143) և այլն:

Նույն երևույթը նկատվում է նաև գոյականի լրացում հանգեսեկող դերանունների մեջ այն դեպքում, երբ իբրև որոշիչ գործածվող դերանունը կրում է գոյականի վրա դրվելիք նախամասնիկը: Հմմտ. երկու են, զորս զգամ յաւէտ հարկաւորս գոլ ինձ նայմիկ կենցաղում (ԹԳՅԶ, 570)—զի երկու ինչ ինձ յոյժ կարեւոր տեսանեմ յաստի կեանս (ԹԳՅՆ, 322). և թէ նոբաւն շարիս յորսայցիցիմ (ԹԳՅԶ, 584)—յորշափ շարիս և ի մալութիւնս անկեալ դնիմ (ԹԳՅՆ, 336) և այլն: Այստեղ, ինչպես նկատելի է, ներգոյականի կաղմության մեջ հաղթահարվում է ոչ միայն հիշյալ նախամասնիկի անհարիր կիրառու-

¹⁴ Վրթանէս Ասկերյանի Թարգմանության առաջին տպագրությունը տալիս է ի խոկմունս, որը սրբագրված է երկրորդ տպագրության մեջ:

թյունը, այլև վերականգնվում ներգոյականի հայցականաձև՝ կաղմությունը. բերված օրինակներում սովում, ծառում, ծովում, կենցաղում ձևերը փոխարինված են, համապատասխանաբար՝ ֆաղց, ծառու, պաճս, կեանո ձևերով:

Ածական անունների համեմատության աստիճանների կաղմությունը հասցված էր մեկ ընդհանուր, քարացած վիճակի, մի բան, որ անգամ լատիներենի ածականի համար այդքան խիստ չէր դրված. համեմատական աստիճանը կաղմվում էր -գոյն, իսկ գերադրականը՝ -գունեղ մասնիկների օգնությամբ: Դրանք ևս փոխարինվում են հին գրական հայերենին հարադատ կաղմությամբ: Հմմտ. որպէս թէ ի վեճագոյնէ բարույ իցեն յառաջծեցեալը (ԹԳՅԶ, 238)—որպէս գերակայ բարույն բղխումնս (ԹԳՅՆ, 144). բայց մեծագոյն իմն անմտութիւն է (ԽՔ, I, 6)—բայց մեծ ևս անմտութիւն է (ԽՔ, II, 15). որքան մեծագունեղ իմն իցէ խնդութիւն (ԳԱ, I, էջ II)—որքան մեծ իցէ խնդութիւն (ԳԱ, II, էջ II). զի ո՛ր և իցէ ստեղծեցեալ բարի և լաւագոյն՝ ստորանկեալ է միշտ այլոց կարելոյ լաւագունեղի (ԳԱ, I, էջ II)—զի բան ո՛ր և իցէ ստեղծեցեալ բարի, գտանի միշտ այլ կարելի լաւագոյն (ԳԱ, II, էջ II) և այլն:

բ) Լատինատիպ ձևերն անհամեմատ մեծ խճողումներ են ստեղծում գրաբարի բայի համակարգում: Դրանք վերաբերում են բայի խոնարհման տիպերին, հիմքակաղմությանը, եզանակային և ժամանակային ձևերի, ներգործական և կրավորական խոնարհումների կաղմությանը, անկանոն բայերի մասնակի «կանոնավորմանը» և այլն: Դրանցից ամենակարևորներին անգամ համառոտակի անդրադառնալիս պարզվում է, որ հին գրական հայերենի օրինակով նոր շրջանի գրաբարի «վերածնունդ» ճանապարհին այդ նորամուծութիւններն իսպառ վերանում են:

Լատինաբան գրավոր աղբյուրներում, ինչպես տեսանք նաև Մխիթար Սեբաստացու՝ վերը բերված դիտողության մեջ, բայի կատարյալի հիմքը հաճախ կաղմվում է ավելորդ ցույականությամբ: Վերջինս հետագայում փոխարինվում է արմատական կաղմությամբ: Հմմտ. ստեղծեցեալք իցեմք աստուծոյ (ԽՔ, I, 11)—ստեղծեալ եմք միայն վասն աստուծոյ (ԽՔ, II, 20). այլայլելն՝ զշարադրութիւնս վկայութեանց առքերեցելոց ի հեղինակէ գրոյն (ԳՄ, I, էջ II)—այլայլել զշարադրութիւնս վկայութեանց բերելոց ի հեղինակէ գրոյն (ԳՄ, II, 14). ներեղեալք ի հոգի նորա (ձեռ. № 6922, 23)—եմեղ ի հոգի նորա (ԱԿՅԱ, 24). րեքացի՛ր այսր և անդր (ԹԳՅԶ, 29)—քնքա՛յ յայսկոյս և յայնկոյս (ԹԳՅՆ, 20). ի լոյս ածեցեալ տպագրութեամբ և մաքեցմամբ սխալմանց գրչաց (ԳԱ, I, էջ II)—ի սխալմանց գրչաց մաքեալ և տպագրութեամբ ի լոյս ածեալ (ԳԱ, II, էջ II) և այլն:

Բացի նրանից, որ լատինաբան գրաբարում տարբերակվում են ըղձական և ստորադասական եղանակները, ստորադասականի մեջ ներմուծվում են նոր՝ անկատար, ապառնի և գերակատար ժամանակաձևեր. այստեղ առաջիկ հետաքրքրական է հունաբան հայերենի հետևությունը կաղմվող անկատարի նորամուտ ձևերի հաղթահարումը: Հմմտ. զի մի եղծեցիցեթին գրեցեալքն (ԳՄ, I, էջ II)—զի մի եղծցին գրեալքն (ԳՄ, II, էջ II):

Բայի կրավորական խոնարհման դեպքում, ներգործականի կոնկրետ հակադրությամբ, գոյացած խորթութիւնները, որոնք երևան են գալիս տարբեր խոնարհումների և առանձին ժամանակների կաղմության մեջ, վերացվում են ըստ ամենայնի: Այդ առումով ուշագրավ են ա, աւ խոնարհման բայերի կրավորականում ներմուծված հատկապես -անիմ մասնիկի (հմմտ. իմանամ-իմանանիմ, առնում-առնանիմ և այլն), ե խոնարհման բայերի սահմանական անցյալ անկատարում եղած խորթության (հմմտ. գրեի, գրեցեի) վերացումը: Հմմտ. սովորութիւն հնացեալ դժուարապէս՝ բողանի (ԹԳՅԶ, 51)—սովորութիւն հնացեալ ոչ վաղվադակի լինի (ԹԳՅՆ, 32). որք պաճեցեթին առ գրումն ալցն (ԳՄ, I, էջ II)—որք պաճեցեթին առ գրումն այնց (ԳՄ, II, էջ II). որք բազմիցս ելանեթին (ԳԱ, I, էջ III)—որքան բազմիցս սխալեին (ԳԱ, II, էջ III). արիք աճուանեթին (ԳԱ, I, 1)—արիք աճուանեթին (ԳԱ, II, 3). կար-

ճառօտք բուեէին (ԹԳՅՀ, 63)—բուեին նոցա սուղ (ԹԳՅՆ, 39), այլև՝ կարճառօտք բուեէին (ՄՄՏ, 48) և այլն:

3. Գրաբարի շարահյուսական համակարգում նկատվող լատինաբանությունը հատկապես վերաբերում է շարահյուսական միավորների համաձայնությանը և շարադասությանը: Այդ հարցում լատինաբան հեղինակները հասնում են ժայրահեղության, ստեղծում քարացած, սխեմատիկ կանոններ, որոնցում, չնչին բացառությամբ հանդերձ, անտեսվում են գրաբարի նախադասության կառուցվածքի ամեն մի նրբություն և ճոխություն: Գրաբարի լատինատիպ նորմությունների հաղթահարումը նկատելի է նաև այս հարցում: Հին գրական հայերենի բառակապակցության, նախադասության կառուցվածքային օրինաչափությունների և կոնկրետ առանձնահատկությունների հետևությունները վերացվում են համաձայնության և շարադասության մեջ եղած լատինաբան խորթությունները:

ա) Շարահյուսական միավորների անխտիր և պարտադիր համաձայնությունը, որ երևան է գալիս լատինաբան երկերում և ձևակերպվում նույնատիպ քերականություններում, աստիճանաբար հաղթահարվում է, փոխարինվում գրաբարի շարահյուսական կառուցվածքին բնորոշ կազմություններով: Այդ իրողությունը ակնառու է մասնավորապես նախադասության անվանական և բայական լրացումների խմբերի փոխհարաբերության մեջ: Լատինաբան հեղինակների խոսքում բառակապակցության բաղադրիչ տարրերը, անկախ իրենց խոսքամասային պատկանելությունից և կապակցման բնույթից, գտնվում են քերականական համաձայնության մեջ: Այնինչ, գրաբարի կոզմանակիցներն այդ հարցում ափելի շատ հետևում են հին գրական հայերենի համապատասխան իրակություններին՝ առաջնորդվելով կապակցվող միավորների ոչ-պարտադիր, նախադասության մեջ լրացումների և լրացյալների կոնկրետ շարադասությամբ պայմանավորվող համաձայնության սկզբունքներով: Հմմտ. ոչ է պարտ գնել զյոյս մեծ ընմարգում ումեք բեկանելում և մանկանացում (ԹԳՅՀ, 128—129)—մի կարի իմն ապալինիր ի մարգ տկար և մանկանացում (ԹԳՅՆ, 78). եամայնք խորհուրդք և արարմունք մեր ուղղեցեալք իցեն միայն ի փառս աստուծոյ (ԽՔ, I, 13—14)—ամենայն խորհուրդք և գործք իմ իցե՞ն ուղղեալ առ նա (ԽՔ, II, 21). էին աղքատք իրօք երկրայնօք (ԹԳՅՀ, 64)—աղքատք էին յերկրաւոր ինչ (ԹԳՅՆ, 39). եղիցի ինձ այցելութք քոյք շնորհք (ԹԳՅՀ, 235)— խնայեսցեն յիս շնորհք քո (ԹԳՅՆ, 142). ոչ երբեք արտուղի ի շաղէն ուղղականէ (ՅՊՁՅ, 245)—ոչ երբէք ի յուղիղ շաղէն արտուղի (ՅՊՍՈՒ, 343) և այլն: Բերված օրինակներում վերացված է բառակապակցության անդամների միջև լատինների հետևությամբ ստեղծված անհարկի հոլովական, թվային համաձայնությունը՝ ի հաշիվ գրաբարին բնորոշ հոլովառության և աղատ շարադասության սկզբունքների կիրառման:

Ինչպես նշում է նաև Հ. Աճառյանը, հենվելով Հովհաննես Կոստանդնուպոլսեցու հայտնի քերականության ընձեռած լեզվական նյութի վրա¹⁵, լատինների ազդեցության արդյունք են նաև գրաբար հայերենով շարադրված երկերում հաճախակի հանդիպող, գրեթե պատրաստի շարահյուսական միավորի արժեք ունեցող որոշ բառակապակցությունների կիրառությունը: Այդպիսի բառակապակցություններն աչքի են ընկնում ոչ միայն անդամ առ անդամ համաձայնությամբ, այլև շարադասության ընդգծված կալուկությամբ: Այստեղ ուշադրվում այն է, որ այդ կարգի բառակապակցությունները հնարավորության սահմաններում հետագայում անտեսվում են և մերժվում: Հմմտ. զգաղցրագունեղ հագայոյ քոյ աբոյ գտցեն զմխթարութիւն, որք վասն սիրոյ քոյ զամենայն վայելչութիւն մարմնական ի բաց ընկեցին (ԹԳՅՀ, 245)—զգաղցր մխթարութիւն սուրբ հագայոյ գտցեն, որք վասն սիրոյ քո՝ յամենայն մարմնական բերկրութեանց ի բաց կացցեն (ԹԳՅՆ, 147).

¹⁵ Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 315:

գերմեռանդալէս բաղձամ վերցնելունիլ (ԹԳՅԶ, 513). եռանդեամբ բնդունել լղծանամ (ԹԳՅՆ, 349), գտանես զժամանակ ուսանելոյ զմտածութիւնս, զի արդ ոչ գտանես զպարապորդութիւն քիստոնէնարար կենցաղավարելոյ (ԽՔ, I, 121)—գտանես պարապ՝ իմաստասիրելոյ, և ոչ գտանես պարապ՝ քիստոնէնարար վարելոյ (ԽՔ, II, 71—72) և այլն:

բ) Նախադասության անվանական և բայական լրացումների խմբերի շարադասական փոխհարաբերության հարցում եղած լատինատիպ նորամուծությունները պայմանավորված են մի կողմից լատիներենի շարահյուսական կանոնների անկողմնակալ ընդօրինակման, մյուս կողմից՝ գրաբարի շարահյուսության ոչ բոլոր հատկություններին խորապես տիրապետելու և հետևելու հանգամանքներով:

Լատինաբան հեղինակների երկերում նախադասության անվանական լրացումներն իրենց լրացյալների հարաբերությամբ ավելի հաճախ ստանում են ևտադաս կիրառություն, որը գրաբարի կողմնակիցների գործերում, լատինատիպ թարգմանությունների նոր թարգմանության, այլև վերահրատարակման մեջ կարգավորվում է և տեղ-տեղ փոխարինվում ազատ շարադասությամբ, ինչպես նաև լրացումների առաջադաս կիրառությամբ՝ բոլոր դեպքերում հետևելով հին գրական լեզվի շարադասության սկզբունքին՝ Հմմտ. նկատեալ օրինակս կենդանարարս սրբոց հարց (ԹԳՅԶ, 61)—հայեաց ի կենդանի օրինակս սրբոց հարց (ԹԳՅՆ, 38). ի գտանելն իմ զգիրս գայս առաքինութեանց, յաջողութեամբ տեառն ի լոյս ածեցեալ տպագրութեամբ, և մաքրեցեալ ի սխալմամբ գրչաց (ԳԱ, I, էջ II)—ի գտանելն իմ զգիրս գայս առաքինութեանց, յաջողութեամբ տեառն ի սխալմանց գրչաց մաքրեցեալ, և տպագրութեամբ ի լոյս ածեալ (ԳԱ, II, էջ II). անմտութիւն է հաւատարն ճշմարտի այսմիլ օրինադրութեանս քիստոնէնակների (ԽՔ, I, 6)—անմտութիւն է հաւատար, թէ այս վարդապետութիւն իցէ ճշմարիտ (ԽՔ, II, 14—15) և այլն:

Լատինաբան գրավոր աղբյուրներում նախադասության բայական լրացումների շարադասական փոխհարաբերությունն ավելի քան խրթին է ու անմիակերպ. այդ լրացումները դժվար են կապակցվում միմյանց և կենտրոնանում, ստորոգյալը իր լրացումների հարաբերությամբ հաճախ հանդես է գալիս ետադաս կիրառությամբ, ընդհուպ դրվելով ամբողջ նախադասության վերջում: Գրաբարի կողմնակիցների ջանքերի շնորհիվ, որն ակներև է հատկապես միևնույն երկի հետագա թարգմանության մեջ, բայական լրացումների շարադասությունը համապատասխանեցվում է գրաբարի նորմային: Եվ քանի որ գրաբարն ինքնին արդեն կենդանի հաղորդակցման միջոց չէր, այս դեպքում նույնպես այդ համապատասխանությունը ոչ միշտ է իրականանում բնական հստակությամբ: Հմմտ. արդ՝ դիւրապէս քամանեցես զամենայն, եթէ յարածամ մտածեցես՝ զոլ քո, մանկանացու (ՅՊՁՅ, 78—79)—դիւրապէս զամենայն ինչ քամանեցես՝ եթէ զմանկանացու զոլք զմտաւ ածիցես (ՅՊՍՈՒ, 338). և ասյալիսիք նեղատրին, և յարածամ տրտնջեն, և զազատութիւն մտաց ոչ գտանեն, մինչև բոլորով սրտիւ վասն աստուծոյ հալատակիցին (ԹԳՅԶ, 29)—և ասյալիսիք տանջին, և ընդ դոյզն իրաց տրտնջին: Ե: չտանան զազատութիւն մտաց, թէ ոչ ի բոլոր սրտէ վասն աստուծոյ հեղանդեն զանձինս (ԹԳՅՆ, 20) և այլն:

Այսպիսով, լատինաբան հեղինակների թարգմանությամբ՝ ձեռագիր կամ տպագիր վիճակով ավանդված, Մխիթար Սեբաստացու ձեռագրությամբ և սրբագրությամբ՝ լույս տեսած, նրա անմիջական աշակերտների վերահրատարակությամբ մեջ հասած, ինչպես նաև Վրթ. Ասկերյանի կողմից երկու հին թարգմանությունների նոր թարգմանությամբ եղած տարբեր զբավոր աղբյուրների լեզվական քննությունից պարզվում է, որ գրաբարի կողմնակիցները լեզվաշինարարական երկարատև և անդուլ պայքար են ծավալել գրաբարի լատինատիպ նորամուծությունների հաղթահարման գործում: Նոր շրջանի գրաբարը հին գրական հայերենի նմանությամբ և օրինակով ընդհանուր գրական լեզու դարձնելու նպատակով գրաբարի կողմնակիցներն իրենց

շանքերն ամենից առաջ կենտրոնացնում են այդ ուղղությամբ, որի հետևանքով գրաբարը ձերբազատվում է լեզվական օտար և անհարկի իրակություններից: Այն իրագործվում է գրաբարի հատկապես բարբառաշարի մեջ լատինների ազդեցությամբ տեղ գտած ածանցման և բառաբարդման արտասովոր երևույթների, ձևարանական համակարգում ի հայտ եկած անվանական և բայական խորթ կազմությունների, շարահյուսական կառուցվածքի մեջ դրսևորված համաձայնության և շարազասության անկանոնությունների աստիճանական նվազեցման ու իսպառ վերացման ճանապարհով: XVIII դարի սկզբներից մինչև 80-ական թվականներն ընկած լեզվաշինարարական այդ պայքարն ավարտվում է լատինարանության հաղթահարումով:

ПРЕОДОЛЕНИЕ ЛАТИНОТИПНЫХ НОВОВВЕДЕНИЙ В ГРАБАРЕ В XVIII ВЕКЕ

ВАЗГЕН АМБАРЦУМЯН

Резюме

Преодоление латинотипных нововведений в грабаре с помощью языковых данных до сих пор в арменистике не подвергалось специально лингвистическому анализу. Нами использовано около 10 письменных памятников, дошедших до наших дней в виде более чем полутора десятков текстуальных вариантов.

В преодолении латинотипных нововведений существенное значение имела языкотворческая деятельность венецианских мхитаристов, особенно Мхитара Себастиани и его учеников. Латинотипные нововведения, искусственно проникающие в грабар нового периода начиная с XIV века, преодолеваются почти на всех уровнях языка с начала XVIII века до восьмидесятых годов данного столетия.